

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԵՈՐԳ ՊԻՍԻԴԵՍԻ  
«ՎԵՑՕՐԵԱՅԻ» ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԱՔՐԻԵԼԱ ՈՒՂՈՒՀՈՄՅԱՆ (Իտալիա)

1. Հայտնի բյուզանդագետ Ագոստինո Բերտուչիի թելադրանքով գրեթե երեք տասնամյակ առաջ սկսեցի զբաղվել Գեորգ Պիսիդեսի «Վեցօրեայի» հայ թարգմանության ուսումնասիրությամբ: Այն օրերին Բերտուչիի ուշադրության կենտրոնում էին Պիսիդեսի երկերը: Նա ուզում էր պատրաստել դրանց քննական բնագրերը, սակայն հասցրեց հրատարակել միայն նշանավոր այս բանաստեղծի ներբողյանների քննական բնագրերը<sup>1</sup>: Ինչ վերաբերում է «Վեցօրեային», նա կարողացավ առաջին անգամ տալ ձեռագրերի ամբողջական ցանկը<sup>2</sup>:

Ձեռագրական հարուստ նյութը այսօր ևս սպասում է ուսումնասիրողին: Ա. Բերտուչիի սկսած գործը առիթ տվեց, որ ուրիշներն ուշադրություն դարձնեն «Վեցօրեային»: Քերթվածի հայերեն թարգմանության լեզվի յուրահատկությունները գրավեցին իմ ղեկավար Ջ. Բոլոնեզիի ուշադրությունը<sup>3</sup>: Նույն օրերին Ջ. Ֆերմեյիան խոր վերլուծություն արեց հին սլավոններեն թարգմանության վերաբերյալ, անդրադառնալով նաև հայերենին<sup>4</sup>: Շուտով լույս տե-

<sup>1</sup> Giorgio di Pisidia, Poemi: I panegirici epici (a cura di A. Pertusi), Ettal, 1959. *Studia Patristica et Byzantina*, 7].

<sup>2</sup> A. Pertusi, Dei poemi perduti di Giorgio di Pisidia "Aevum", 30 (1956), 400—407; J. Quercius, Opera Georgii Pisidae, Theodosii Diaconi et Corippi Africani Grammatici, Roma 1777 (=PG, 92, cc. 1425—1578).

<sup>3</sup> G. Bolognesi, Sulla traduzione armena dello Hexocmeron' di Giergio Pisida. "Atti del Sodalizio Glottologico Milanese", 11 (1958) [1959], fasc. 1 e 2, 19—25; ID., La traduzione armena dei "Progymnasmata" di Elio Teone, „Accademia Nazionale dei Lincei, Rendiconti della classe di Scienze morali, storiche e filologiche" s. VII, vol. LVII "Roma, 1962, passim; ID., Traduzioni, di testi greci: in *Studia classica et orientalia Antonino Pagliaro*" oblata, Roma, 1969, 219—291, հատկապես 236 էջից սկսած:

<sup>4</sup> Cfr. G. Fermeglia, Note slave, "Rendiconti dell' Istituto Lombardo di Scienze e Lettere, classe di Lettere", 97 (1963), 187—191; ID., Studi sul testo delle due versioni (slava ed armena) dello 'Hexaemeron' di Giorgio Pisida, "Memorie dell' Istituto Lombardo—Accademia di Scienze e Lettere, classe di Lettere", 28 (1964), fasc. 2, 227—333; ID., *Noterelle armene*, "Rendiconti dell' Istituto Lombardo di Scienze e Lettere, classe di Lettere", 109 (1975), 199—201.

սավ երկու համառոտ, բայց կարևոր հոդված՝ «Վեցօրեայի» դադափարի և նախադրյալների վերաբերյալ<sup>5</sup>, իսկ լեղվի, ոճի և բովանդակության հարցերը վերջերս քննության առավ ն. Ռադիչչևեր, որ իր աշխատության վերջին գլուխը նվիրեց սլավոնական թարգմանությունը<sup>6</sup>:

Օրակարգի խնդիր է հունարեն բնագրի բնական հրատարակությունը, բնագիր, որ մեծ դեր է խաղացել է դարի բյուզանդական մշակույթի մեջ:

2. Ինչ վերաբերում է հայերեն թարգմանությանը, որևէ նոր ձեռագիր հայտնաբերված չէ վերջին տասնամյակներին<sup>7</sup>: Ահա մեղ ծանոթ ձեռագրերը.

Մ— 1104 ս. Ղազարի Մխիթարյան մատենադարան, ԺԳ—ԺԴ դդ., ժողովածու, էջ 101—105, հատվածներ, ընդամենը 87 տող.

Ա— Ձեռ. 429 Ձմմառի հայրապետական դրողարանի, որ եկել է Պոլսի Անտոնյան հավաքածոյից, 1701 թ., ժողովածու, թղ. 131—140<sup>8</sup>.

Ը— Ձեռ. 24 (16) Անթիլիասի կաթողիկոսարանի մատենադարանի Նիկոզիայի հավաքածու, 1307 թ., ժողովածու, թղ. 113ա—123ա: Այս ձեռագրի մասին տեղեկություն հրապարակեց ն. Ակինյանը<sup>9</sup> մի հոդվածում, և ես անմիջապես ձեռք բերի մանրաժապավենը:

Ձեռագրի մի ընդօրինակություն այժմ գտնվում է ս. Ղազարում (արտագրվել էր, երբ մայր գրչագիրը Պոլսում էր պահվում. ընդօրինակվել է Մխիթարյանների ապսպրանքով՝ հրատարակելու նպատակով):

1900-ին վենետիկում լույս տեսավ հ. Աթանաս Տիրոյանի ջանքերով «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը<sup>10</sup>, որ ունի համառոտ ներածություն. խոսվում է հեղինակի, ենթադրյալ թարգմանչի մասին, բայց որևէ տեղեկություն չի տալիս իր օգտագործած ձեռագրի վերաբերյալ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա օգտագործել է ձեռագրի ընդօրինակությունը, երբեմն օգտագործել է սլատառիկը, որ կար Մխիթարյան մատենադարանում: Տիրոյանը հրատարակում է հայերեն թարգմանությունը՝ տողատած գուգադիր՝ հունարեն բնագիրը: Ներածության մեջ նա զգուշացնում է, որ հետևում է հունարեն բնագրի հաջորդականությանը: Բնագրի այն հատվածները, որ չկան հայերենում, Տիրոյանը թարգմանել և գրել է շղագրով: Հրատարակությունն օժտված է բաղմամբով լեզվական, բանասիրական և մեկնողական ծանոթագրություններով: Հրատարակիչը համեմատություններ է կատարում բնագրի հետ, հիմնվելով Ի. Քուերչիի և Ռ. Հերխերի հրատարակությունների վրա: Հայերեն հրատարակությունը կարելի է բարեփոխել շատ տե-

<sup>5</sup> C. Bianchi, Note sulla cultura a Bisanzio all'inizio delo VII secolo in rapporto all 'Esamerone' di Giorgio di Pisidia, RSBN, n. s., 12—13 (1965—66), 137—143; ID., Sulla cultura astronomica di Giorgio di Pisidia "Aevum", 40 (1966), n. 1—2, 35—52.

<sup>6</sup> N. Radosavič, The 'Hexaameron' of George Pisides and ist Slavonic Translation (in serbo), Beograd, 1979.

<sup>7</sup> G. Uluhogian, Contributi allo studio della traduzione armena dell' 'Hexaameron', di Giorgio di Pisidia, "Atti del Sodalizio Gioiologico Milanese" 12 (1959) [1962], n. 1—2, 19—27.

<sup>8</sup> Ն. Ակինեան, Յուրակ հայերէն ձեռագրաց Ձմմառի վաւերի մատենադարանին, Բ. Բ. Անտոնեան հուարածոյ, Վիեննա, 1971, էջ 13—17:

<sup>9</sup> Ն. Ակինեան, Դասիթ Հարրացիո թարգմանությունները, «Հանդես ամսօրյա», 71 (1957), ծան. 6—7, էջ 275:

<sup>10</sup> Ա. Տիրոյեան, Վեցօրեայք Գեորգեայ Պիսիդեայ իմաստասիրի, Վենետիկ, 1900:

ղերով՝ ինչպես պարզվեց իմ քննությունից: Բարդատելով բնագիրն ու հայերեն ձեռագրերը, ներառյալ նաև C ձեռագիրը, որ ծանոթ չէր Տիրոյանին, հանգեցինք այն եզրակացության, որ A և C նույն ընտանիքին են պատկանում և տարբեր են M-ից: Համեմատությունից բխեցրած լեզվական և բնագրագիտական եզրակացություններս շարադրված են վերոհիշյալ հոդվածում: Հայերեն թարգմանությունն արված է հունարանների սկզբունքով (բառ առ բառ, նմադիր առ նմադիր): Սա հավանաբար վերջին հունաբան թարգմանություններից է:

Հունարենի և հայերենի անհամաձայնությունների պատճառները կամ գալիս են բնագրի տարբերակներից (տարրնթերցումներից), կամ սխալ հասկացված և կամ սխալ բաժանված բառերից, մոտիկ կամ նման բառերի շփոթությունից՝ թյուրըմբռնումից: Կա ևս մեկ հնարավորություն. մեզ անծանոթ բնագրի առկայությունը:

3. Հայերեն բնագրի վերանայումն ինձ համոզեց, որ հայերեն թարգմանությունն օգտակար է նաև բնագրի լուսաբանության համար (թարգմանչի անձնավորության հարցը մեզ այժմ չի զբաղեցնում. հիշենք, որ Ն. Ակինյանի կարծիքով այդ գործն իրականացրել է Ստեփանոս Սյունեցին՝ Ը դարի նշանավոր մատենագիրը): Ակնառու է մի օրինակ. 926—1346 տողերը, ուր բյուզանդական բանաստեղծը քերթողական ոճով, թեև միօրինակ, դրվատում է մի շարք կենդանիների սքանչելիքները, որոնք արտահայտում են հեղինակի մտքով առաջին բացառիկ իմաստությունը, որ ստեղծել է բոլոր կենդանիներին: Մշակութային հիմքը, որից դուրս են գալիս աղբյուրները և որոնցից օգտվում է հեղինակը, հասնում են Արիստոտելից մինչև Էլիանոս, Փիլոնից Պլինիոս, մինչևիսկ այն օրինակը, որ ավելի մոտ է բնագրին, շնայած այս վերջինը բոլորովին յուրահատուկ ձևով է կազմված:

Այս կենդանիների վերաբերյալ հատվածը, ինչպես ասացինք, սկսվում է երկի կեսից (926-րդ տողից)<sup>11</sup>: Մինչև այստեղ հայերենը հետևում է հունարենին, բացառությամբ մի քանի տողերի, որոնք չկան հայերենում: Այս տողից մինչև 1346 տողը՝ հայերենի հատվածների հաջորդականությունը փոխվում է, կան և պակասող փոքր հատվածներ: Բացակա տողերը հեշտ է տեսնել, որովհետև հրատարակիչն ավելացրել է շղագրով: Սակայն հաջորդականության տարբերությունները հնարավոր չէ անմիջապես բմբռնել, քանի որ Տիրոյանը, ինչպես ասում է էջ 99-ի ծանոթագրության մեջ, նյութը շարել է հունարենի հետևողությամբ: Սույն ծանոթագրության մեջ նա այն միտքն է հայտնում, որ հաջորդականության տարբերությունները հետևանք էին մեխանիկական փոփոխության (վերակազմելիս կարող էր խաթարվել) կամ Պուսի գրչագիրը, որ նա օգտագործել է, կամ դա եղել է ավելի հին մի գրչագրում: Մ պատահիկը որևէ բանով չէր օգնում, որովհետև նրա պարունակած նյութերը չեն հասնում կենդանիներին վերաբերող հատվածին: Բայց ձեռագիրը, որ անծանոթ էր Տիրոյանին, նույն հաջորդականությունն ունի, ինչ A ձեռագիրը: Ուստի, եթե հաջորդականության այս տարբերությունն իրոք գալիս է էջերի պատահական տեղափոխությունից, դա նշանակում է, որ կամ C ձեռագիրը A-ի շատ հին պատկեր է, կամ երկուսը ևս գալիս են շատ հին գրչագրից, քանի որ թվագրված լինելով 1307 թ., չորս տարով կանխում է A-ն:

4. Մենք մի քանի նշաններից դատելով ենթադրում ենք, որ հաջորդականության տարբերությունը կարող էր նույնիսկ լինել այն հույն բնագրում, որ թարգմանիչն ունեցել է իր ձեռքին: Չկա այս երկար հատվածի մեջ մի տրա-

<sup>11</sup> Կան հույն ավանդույթի վկայություններ, ըստ որոնց Ասիական «Վեցօրեայքը» 3000 տող էր: Մինչդեռ մեզ հասած հունարեն քնագիրը մոտ 2000 տող է:

մաբանական ընթացք, որ կարենանք ասել, թե իբր թերթերի մեխանիկական շփոթություն է. ինչպես տեսնվում է հայերենում՝ կարող է և ճիշտ լինել այս հաջորդականությունը: Յուրաքանչյուր կենդանու վերաբերող հատվածներն անխաթար են. անկարելի է ենթադրել, թե դրանք էջերի «մեխանիկական» տեղափոխությունից շեն տուժել:

Հետաքրքիր կլիներ համեմատությունը սլավոնական թարգմանության հետ: Զ. Ֆերմելիան ցույց է տվել, որ շատ անգամ սլավոներենը համընկնում է հայերենին, հեռանալով հունարենից: Դժբախտաբար Շլյապկինը, որ 1882-ին հրատարակեց սլավոներեն թարգմանությունը<sup>12</sup>, գրեթե ոչինչ չի հաղորդում մեզ հետաքրքրող հարցի մասին: Եթե հայերեն և սլավոներեն թարգմանությունների այս հատվածների հաջորդականությունը համընկնում է, կարելի է ենթադրել, որ երկուսը բխում են միևնույն հունարեն ձևագրից, որն իր հերթին տարրեր է այսօր մեզ ծանոթ հույն բնագրից: Սա կարևոր լուսաբանություն կլիներ հունարեն բնագրի տարբեր խմբագրությունների մասին: Որ հունարենը կարող է տարբեր խմբագրություններ ունեցած լինել՝ ցույց է տալիս ևս մի փաստ:

5. Հայերեն թարգմանությունն ունի մի փոքր հատված, որ հույն բնագրի մեջ չկա: Դա չի կարող լինել միայն մեկնություն, այլ ինքնուրույն հատված պիտի լինի: Այս պատահիկը մոտավորապես տասը տող է, որ մուծվել է հունարենի 932 տողից հետո, և խոսվում է հեքիաթային մի կենդանու մասին, որի անունը՝ կատովլեփս, հունարեն նշանակում է վայր նայող: Սակայն հունարեն «Վեցօրեայն» ունի այլ մի հատված, ուր խոսվում է կատովլեփսի մասին (959—967 տողերը): Այս տողերը թարգմանվել են հայերեն և գտնվում են վերոհիշյալ պատահիկից հետո: Այնպես որ հայերենում կա կրկնություն:

5. 1. Բերենք այս երկու հատվածները: Նախ՝ վերջինը, ապա առաջինը. որ կա միայն հայերենում:

Ուտի շնչէ կատովլեփսն քնաւորեալ  
Հրեղէն շունչ քնդ ոնգունսն  
Եւ ի խոնարհ գոսաւմն քոցոյն շրջէ  
Յերի արդեօք առաքէր զքերումն շնչոյն որպէս աղեղնաւոր...  
...  
Եւ շանթնացն օրինակաւ հրեղէն շոգոյն  
Թէ ոչ քնաւորեալ սովորութիւն ունէր զխոնարհեղն  
Եւ զքոցոյն ետանդն իջել ի խոնարհ:

Ընդհանուր առմամբ հայերենը հավատարիմ է բնագրին, թեև դժվար է բացատրել՝ ինչու երկու տող բացակա է հայերենի մեջ:

5. 2. Շատ ավելի հետաքրքիր է մյուս հատվածը հեքիաթային կենդանու մասին, որ հայերեն ձևագրերում գտնվում է 929—930 տողերից հետո, նըվիրված թռչունների՝ ձայն արտաբերելու սքանչելի կարողությանը, որ ոմանց խորհել է տվել, թե իրենք իմաստ արտահայտող խոսք ունեն: Բերենք հայերեն այդ հատվածը.

Ուտի առեալ կատովլեփսն (որ կոչի վայրահնջեաց) հրաբերմ քերան  
Եւ առաքէ զագին ի շունչ ապականիչ  
Յերկիր կոյս քանայ զքերան իր եւ հայի ի խոնարհ  
Եւ ի վայր հայելումն չափաւորէ զվնասն:

<sup>12</sup> И. А. Шляпкин. (Шестоднев Георгия Писиды в славяно-русском переводе 1385 года. «Памятники древней письменности и искусства». С. Петербург, 1882. Հույն քնագրի հետ համեմատության մասին խոսել է Պ. Նիկիտինը «Замечания к тексту Шестоднева Георгия Писиды» «Журнал Мин-ва нар. просвещения», մաս 254 (1888), հունվար, 1—20, որ Ֆերմելիան հիշում է, և որ մեզ անմատչելի եղավ:

- 5 Քուրի ինձ նման զոյ զնա այնորիկ  
 Որ մերոց մեղաց է մշակ  
 Քանզի զգայրի որպէս զնա հուր կիզիչ  
 Եւ առաքէ զշոգի ապականացու փշման  
 Յերկիր քացեալ զբերան իւր եւ ծանրամայ ի վայր  
 10 Որպէս զի ունեղով խելամտաբար հայեացս  
 Փախիցուք ի նորա շնչոյն առաքման (առաքմանէ Ը)

6. Այս հատվածից մի բանի հարց է ծագում: Ա. Սուլյն տողերը հեղինակայի՞ն են: Բ. Եթե ընդմիջարկում է՝ եղիւ է հունարենի՞, թե հայերենի մեջ: Գ. Ի՞նչ է իմաստը հատվածիս ինքնին և ինչ հարաբերություն ունի կոնտեքստին:

Հեշտ չէ որոշակի պատասխան տալ այս հարցերին:

Ամենից առաջ թարգմանական երկի մեջ պետք է որոշել՝ ինչն է հեղինակային. սա կարող է նշանակել և՛ սկզբնաղբյուրի ամբողջական ու հավատարիմ թարգմանություն, և՛ կարող է նշանակել, որ բնագրից է, բայց այդ բնագիրը հարազատ հեղինակինը չէ: Տվյալ դեպքում պետք է սլարզել (եթե հնարավոր է). հատվածն իսկապես հունարենից է թարգմանվել և միայն դրական պատասխանի դեպքում որոշել՝ Պիսիդեսինն է, թե՛ ոչ:

Փորձենք պատասխանել առաջադրված հարցերին:

6. 1. Արդեն ուստի առեալ բանաձևը, որ համապատասխանում է հուն. *πόθεν + դերբայ կամ բայ*, — մի բանաձև է, որ Պիսիդեսը սիրում և օգտագործում է հաճախ. տե՛ս բնագրի 576, 646 տողերը և հատկապես՝ 933, որտեղ նույն հաջորդականությամբ են շարված բառերը, և որը նույնանում է մեզ հետաքրքրող հատվածին. *πόθεν... γερυψ... ἰ.σ.ά.ν* — ուստի առեալ պասկչի թեև կարելի է առարկել, որ այս հարցական բանաձևերի կրկնությունը հեշտությամբ կարող էր ընդօրինակել կեղծողը: Սակայն բառապաշարը սերտ հարաբերություն ունի ամբողջ բնագրի հետ, որը երևում է հետևյալ օրինակներից: Տող 2. *հրաբերձ*, որ նշ՞ր նշում է իրրև հատկացուցիչ սերովրեններին և այս բնագրում օգտագործված է իրրև հոմանիշ *հրաբերի* և գտնվում է քերթվածի 656-րդ տողին որպես սրտի հատկացուցիչ և 887-ին՝ արևի սկավառակի, որոնք հարազատ են բնագրին: Նույն տողում կա ապականիչ ամրոխին, ուր ընդգծված բառը, որ գործածված է 346-ում, տող 4՝ շափաւորէ, տ. 7. զգայրի, տ. 10. ծանրանայ ի վայր:

Կեզվական և ոճական տվյալները մեզ հանգեցնում են այն վարկածին, որ հատվածս թարգմանված է հունարենից և որևէ հայի ընդմիջարկություն չէ:

6. 2. Ավելի բարդ է հաջորդ հարցը. սույն տողերը Գեորգ Պիսիդեսինն են, թե ընդմիջարկություն է հույն բնագրի մեջ: Ամենից առաջ նկատենք, որ կատովլեփսին վերաբերող կրկնությունը միակը չէ: Հեղինակը երկրորդ անգամ անդրադառնում է և այլ կենդանիների (օր. սիրամարգ՝ տե՛ս տտ. 245—249 և 1286—1292),

Այս հատվածի գոնե հնության մասին վկայում են նաև այլ փաստեր հայ մատենագրության մեջ (անուղղակի ավանդույթ). Վարդան Արևելցին «Մեկնութիւն Հնգամատենի» գործում շատ տողեր է քաղում Պիսիդեսի երկից, իմիջիայլոց նաև կատովլեփսին վերաբերողները՝ «Մննդոց գրքի» կապակցությամբ. «Կատովլիլայն թռչուն է, որ կոչի վայրահայեաց... զՆուր բերանոյն յերկիր առաքէ, զի մի՛ վնասեսցէ զոք ի կենդանեաց»: Չնայած կատովլեփսն այստեղ թռչուն է դարձել, բայց երեք այն կապակցությունները, որոնցով Արևելցին պատկերում է այս կենդանուն, ցույց են տալիս, որ իր մեջբերածը բուն այն հատվածն է, որի բնագիրը մեղ ծանոթ չէ: «Ուր կոչի վայրահայեաց» բացատրությունը Պիսիդեսի հայերեն թարգմանության մեջ և այստեղ նույնն

է: «Զհուր բերանոյն յերկիր առաքէ» — հիշեցնում է քերթվածի «առաքէ դո-  
դին... յերկիր կոյս բանայ գերիան»: Վերջապէս, նույն նպատակի պարագա  
երկրորդական նախադասութիւնը կաւ ն' վարդան Արեւելցու մեջբերման, ն'  
մեզ հետաքրքրող հատվածի մեջ.

**Պիս. ... որպէս զի... փախլցուք ի նորա շնչոյն առաքմանէ:—**

**Վարդան. ... զի մի' վնասեացէ զոք ի կենդանեաց:**

Կարելի է ասել, որ Արեւելցուն ծանոթ է Պիսիդեայի այն հատվածը, որ  
չենք գտնում հունարեանում: Եթե հիշենք, որ Արեւելցու մեր օգտագործած ա-  
մենահին ձեռագիրը 1261 թ. է, ապա դրանից առաջ արդեն սույն հատվածը  
ձեռք է հայերեն թարգմանութեան մեջ:

6. 3. Ինչ վերաբերում է հեղինակի պատկանելութեանը՝ դժվար է ստույգ  
պատասխան տալ: Դրա համար պետք է ավելի խոր պատկերացում ունենալ  
Պիսիդեայի ներշնչող գաղափարների մասին, որպէսզի կարենանք որոշել, թե  
հատվածը խո՞րթ է դրան: Պիսիդեայի մտավոր պատրաստութեան մասին շատ  
բան չգիտենք:

7. Երկու հատվածի մեջ առաջին դերակատարը կատովկեփան է. հեթա-  
թային մի շորքոտանի, որ շատ անգամ հիշված է անտիկ աղբյուրներում: Կեն-  
դանին պատկերված է իբրև շորքոտանի, ցուլի նման (էլիանոս), կամ վայրի  
ոչխարի, կամ հորթի (Աթենեսոս), մարմնով ոչ մեծ (Պլինիոս, Պոմպոնիոս  
Մելա, Սոլինոս), բայց մի խոշոր և ծանր գլխով, որ խոնարհված է դեպի  
երկիր (այստեղից՝ վայրահայեաց), խիտ բաշտով, որ աչքերին է թափվում:  
Աչքերով (Աթենեսոս, Պլինիոս) կամ հորով (էլիանոս) այրում է՝ ինչ հանդիպի:  
Ըստ էլիանոսի և Աթենեսոսի՝ ապրում է կրիայում, ըստ Պլինիոսի, Պոմպոնիոս  
Մելայի՝ Նեղոսում: Աթենեսոսն ասում է, որ կրիայի քոչվորները Գորգոնին  
կատովկեփան են կոչում, այդպիսով ընդգծելով նրա հայացքի ուժը:

Գեորգ Պիսիդեսը հենվելով այս պատկերացումների վրա, ավելացնում է  
բարոյական-ուսուցական հանգամանք, ասելով՝ եթե գլուխը դետնին շիտ-  
նարհի՝ կարող է վնասել մարդկանց, և երկիրը կցլի դիակներով: Այս սոս-  
կալի երևույթը պատկերված է հայերեն այս հատվածում հանգամանորեն, և  
ասում է՝ մի անորոշ անձնավորութեան, որին նա կոչում է մշակ մերոց մե-  
ղաց<sup>13</sup>: Կարելի է ենթադրել, որ հեղինակն ակնարկում է սատանային: Սա-  
կայն այս գազանը գլուխը երկիր է խոնարհում, որպէսզի մարդիկ կարողա-  
նան խուսափել «ի շնչոյն առաքմանէ»: Եթե դա իրոք սատանան է՝ սնհաս-  
կանալի է մնում նրա վարքը:

Թվում է, որ Գեորգ Պիսիդեսը միջնադարում վերակենդանացնում է մո-  
ռացված կատովկեփայը: Սա չի երևում, որքան մեզ հայտնի է, «Բնախօսի»<sup>14</sup>  
որևէ ծանոթ խմբագրութիւնից, և հետո, ավելի ուշ՝ նաև այսպիսի կենդանի-

<sup>13</sup> Մշակ-Ռամպատասխանում է Ռուարեն քաղցոս բառին (ՆՀԲ) և այս առումով  
կարող է օգտագործված լինել 39-րդ տողում, ուր խոսքը վերաբերում է Սարգիս Կոս-  
տանդնուպոլսեցի Ռայրապետին, որին նկիրված է Պիսիդեսի քերթվածը: Նրան դիմում է  
բանաստեղծը օ՝ քաղցոս: τῶν πετρῶν κα: τῶν βῆτων—Ո՛վ մշակ քարերի և փշերի: Այ-  
սինքն փշերից և քարերից մի բան անեցնող: Սակայն Պիսիդեսի բնագրի մեջ ընդհան-  
րապէս մշակը օգտագործված է ոչ Գեորգոսի դիմաց, որ Ռիչլայ տողի մեջ թարգմանված է  
Երկրագործ, այլ: ε ρυατιοσ (տե՛ս 222, 319, 577, 693, 910 և այլն). մի բան անող իմաստով,  
կիրառելով սեռական ճողովով, որ ուղիղ խնդրի իմաստ ունի (Ռմտ. Ղուկ. ԺԳ, 27) ուր  
Ռուարեն էրգատես թարգմանված է մշակ անիրատութեան: Այս արտահայտությունը լի-  
ովին գուցա հետ է մյուսին՝ մշակ մեղաց մերոց: Վերջինիս նշանակությունը պիտի լինի՝ նա,  
որ մեր մեղքերի դրապատճառն է: Իսկ սա կարող է լինել սատանան:

<sup>14</sup> «Բնախօսի» վերաբերյալ հարուստ մատենագիտություն տե՛ս N. Henke. Studien  
zum Physiologus in mittelalter übungen, 1976:

ների վերաբերյալ աղբյուրներում (Իսիդորոս Սևրիացի, Հռաբանո Մաուրո), մինչևիսկ ուշ միջնադարյան ժողովածուներում: Ուստի առավել հետաքրքրական է, որ Վարդան Արևելյցին հիշում է կատովիփսին, թեպետ շորքոտանին թռչուն է դարձրել, որ դալիս է ծովային կենդանիներից հետո և բազեից ու ծիծեռնակից առաջ:

Հեշտ չէ բացատրել, թե ինչպես է եղել այս կերպարանափոխությունը: Բայց շենք կարծում, որ նա սլատահարար է այդ արել, քանի որ նա այդ կենդանին մուծել է մի հատված, որ վերաբերում է «Գիրք ծննդոցի» մեկնաբանությանը, և բերվում է հինգերորդ օրվա կապակցությամբ, երբ ստեղծվել են ծովային և օդի կենդանիները: Այս հետաքրքրական փաստը, սակայն, մեր նպատակից դուրս է և առանձին ուսումնասիրության նյութ<sup>15</sup>:

Ց. Մեր նպատակն էր ցույց տալ՝ ինչպես հայ բանասիրությունը կարող է լուսաբանել և լրացնել դասական և բյուզանդական բանասիրության շատ խնդիրներ: Եթե մենք նկատի առնենք, որ «Վեցօրեայի» հայ թարգմանությունը եղել է հավանաբար Ը—Թ դարերի միջև, համեմայն դեպս ժ դարից առաջ, և ունեցել է իբրև օրինակ հունարեն մի ձեռագիր, որ ավելի վաղ է եղել, քան այժմյան ամենահինը, որ ԺԱ դարից է (Paris, gr. suppl. 690), ակնհայտ է, որ հայկականը շատ կարևոր է Պիսիդեսի բնագիրը ճշտելու և ընդհանրապես ուսումնասիրելու համար<sup>16</sup>:

**ГАБРИЕЛА УЛУОЧЯН (Италия)**—Заметки об армянском переводе «Шестоднева» Георга Писида.— В армянском переводе поэмы известного византийского поэта «Шестоднев» автор статьи нашёл фрагмент, отсутствующий в греческом оригинале. Языково-стилистический анализ выясняет, что поэма переводилась на армянский в VIII—IX вв. с греческой рукописи, более ранней, чем дошедший до нас вариант (X в.). Очевидно, что армянский текст чрезвычайно важен для исследования поэмы в целом. С другой стороны, изыскания свидетельствуют о том, что армянская филология в силах освещать и дополнять многие вопросы классической филологии.

<sup>15</sup> Ք. Մուրատովան "The Medieval Bestiary" գրքում (Մոսկվա, 1984) նշում է կատովիփսի, բայց շփոթում է մի ուրիշ՝ հին աղբյուրներում հիշված կենդանու հետ՝ eale:

<sup>16</sup> Այս հոդվածն արդեն պատրաստ էր, երբ ստեղծեցանք, որ իտալացի երիտասարդ հետազոտող Ֆարրիցիո Կոննելլին, որ պատրաստում է Պիսիդեսի երկի մոր հրատարակություն, գտել է ԺԳ դ. մի հունարեն ձեռագրում (Paris, gr. 1902) կատովիփսի վերաբերյալ հատվածը, որ չկար մինչև օրս ծանոթ հունարեն ձեռագրերում: Նորահայտ ձեռագիրն ունի նաև այն հաջորդականությունը, ինչ հայերենը: Սա ևս մի անգամ ցույց է տալիս հայկական թարգմանությունների կարևորությունը: